№ 251 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1909 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 12 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 251

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 228.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 12-ին
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Տեղի կունենայ
Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական եւ Տնայնագործական Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
ՊԱՐԱԳՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1) Վարչութեան տեղեկագիրը ընկերութեան գործունէութեան մասին.
2) Զեկուցում «Ալպիական տնտեսութեան մասին» Կովկասում) կանէ Ալ. Քալանթար.
3) «Ջեմստվօյի կազմակերպութիւնը)
4) Ընթացիկ հարցեր.
Ներկայ կարող են լինել նաև կողմնակի անձինք։
(հ. հ.) (առ.) 1190. 2—2

ՍԽԱԼ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

I

Ինչպէ՞ս էք հասկանում հետևեալ երևոյթները.

Վաճառականը կամ գործակատարը վերադառնում է գրասենեակից տուն և սկսում է առանց որևէ պատճառի բարկանալ տանեցիների վրա, ծեծել երեխաներին և ծառաներին։

Կամ պաշտօնեան, մտնելով տուն, առանց որևէ առիթի թափում է հայհոյանքների տարափներ ծառայողների վրա։

Կամ ուսուցիչը, մտնելով դասարան, հանդիսանում է մի դահիճ և առանց պատճառի պատժում այս ու այն աշակերտին։

Այդպիսի օրինակներ կարող էինք շարել բազմաթիւ։

Երևոյթը տեղի ունի կեանքի մէջ և մանաւանդ նա յաճախ էր մեր հին կեանքում։

Ի՞նչ է եղել, սակայն, գործակատարի, պաշտօնեայի, ուսուցչի վայրենի գործողութիւնների շարժառիթը։

Այն, որ նրանց վրա բարկացել է նրանց մեծաւորը, այն, որ նրանք փող են տանուլ տուել թղթախաղում, այն, որ նրանք անաջողութեան են հանդիպել իրանց գործառնութիւնների մէջ, այն, որ նրանք դժբաղդ ընդհարում են ունեցել իրանց ծանօթների, կամ հոգաբարձուների, կամ տնատէրերի, կամ ոստիկանութեան հետ և այլն։

ԲԺՇԿԱՊԵՏ
Ն. Ս. ՕՐԷՄԲՕՎՍԿԻ
Կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը ամեն օր՝ երեկ. ժամը 4—7-ը։ Պետրոս Մեծի փողոց, № 26, գեներալ-նահանգապետի դիւանատան դիմաց։
(և. հ. կ.) (առ.) 1217. 11—1

Իսկ ինչ մեղաւոր են տանեցիները կամ աշակերտները։

Նրանք անմեղ զոհեր են։

Քամահելի է այդ իրականութիւնը, տխուր է այդ երևոյթը. և մենք ամենքս բողոքում ենք դրանց դէմ։

Սակայն, եթէ լաւ դիտենք մեր ներկայ հասարակական-կուլտուրական կեանքը, մենք կը տեսնենք, որ ներկայումս մեր հասարակութիւնը իր շատ պարտաւորութիւնների և թանգագին գործերի վերաբերութեամբ գործադրում է նոյն արարքը, ինչ որ մեր նկարագրած պաշտօնեան, ուսուցիչը, վաճառականը և գործակատարը իրանց տանեցիների և ենթակաների վրա։

Արդարև՝ նայեցէք ձեր շուրջը և տեսէք թէ ինչ թշուառ վիճակի մէջ են մեր հիմնարկութիւնները, հաստատութիւնները, դպրոցները, ընկերութիւնները, թատրօնը, գրականութիւնը, գրավաճառութիւնը և այլն։

Երբ դուք կշտամբում էք հասարակութեան անդամներին նրանց անտարբերութեան համար, թէ ինչո՞ւ նրանք չեն մասնակցում այս և այն գործին, թէ ինչո՞ւ նրանք չեն նպաստում այս ու այն ձեռնարկութեան, դուք լսում էք այս տեսակ պատասխաններ.

— Ես զայրացել եմ հասարակական մի քանի գործողների արարքներից։

— Ես վնասվել եմ էքսպրօպրիատօրից։

— Ես ինձ վիրաւորված եմ զգում անվայել գործողութիւններից, որոնք կատարվել են մի քանի հիմնարկութիւններում։

Եւայլն։

Անթիւ են այդ տեսակ առարկութիւնները։

Մենք լսում ենք նրանց ամեն օր։

Եւ հասկանում ենք նրանց գոյութեան պատճառները։

Բայց մենք բողոքել ենք և դարձեալ բողոքում ենք այն անտարբերութեան դէմ, որ առաջ է գալիս հասարակական մթնոլորտում և քայքայում է մեր կեանքը, ոչնչացնելով և այն փոքրիկ կուլտուրական գործը, որ տասնեակ տարիների մեծագոյն ջանքերի շնորհիւ ձեռք է բերվել մեր խեղճ և աղքատ կեանքում։

Հասարակութեան անդամները չը պէտք է անարժանների, վատերի պատճառով աչքաթող անեն կուլտուրական գործերը և հասարակական պարտաւորութիւնները։ Նրանք իրանց ստացած վիրաւորանքների և անախորժութիւնների փոխարէն չը պէտք է զոհ դարձնեն իրանց լաւագոյն նպատակները և յոյսերը. վնասակար գործողութիւնների համար վրէժ չը պէտք է հանեն հասարակական գործից՝ անարդար կերպով դարձնելով նրան զոհ և քաւութեան առարկայ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 10 նոյեմբերի

Սենատն անհետևանք թողեց այն ութ հայերի վճռաբեկ բողոքագիրը, որոնց Թիֆլիսի դատաստանական պալատը դատապարտել է զանազան ժամանակներով բանտարկութեան նրա համար, որ 1908 թ. ապրիլի 8-ին, իրար մէջ խօսք կապելով թոյլ չը տուին Գանձակի նահանգի Քարաշէվ գիւղի մօտերը գտնվող մատուռի մէջ ուղղափառ աստուածպաշտութեան կատարումը, ընդհատեցին պատարագը և ուժով դուրս տարան քահանային։

(Հ. Գ.)

—

Թեհրան, 10 նոյեմբերի

Եփրեմը իր խմբով կանգ առաւ Զենջանում։ Փոքր դիմադրութիւնից յետոյ, Մուլլա-Ղուրբան-Ալին փախաւ լեռները։ Կառավարական զօրքերը գրաւեցին բերդը և ձեռք ձգեցին ապստամբութեան պարագլուխներին։ Կառավարութիւնը նրանց վրա տուգանք դրեց 2000 ր.։ Քաղաքային հրապարակի վրա շինված է կախաղան։

(Հ. Գ.)

—

Պարիզ, 15 նոյեմբերի

Պատգամաւորների պալատ։ Ժօրէսը պահանջում է հրատարակել Ֆրանսիայի և Սպանիայի միջև կապված գաղտնի պայմանագիրը։ Պիշօնը ասում է, որ գոյութիւն ունի լոկ հանրայայտ պայմանագիր, որ հրատարակված է Դեղին գրքում։ «Սակայն,— շարունակում է մինիստրը,— հէնց որ երկու երկիրների դիպլօմատները համաձայնութեան կը գան այս կամ այն անհրաժեշտ միջոցների և յատուկ պայմանագրեր կնքելու վերաբերութեամբ, նրանք պարտաւոր են ուշադրութեան առնել այն պատահական երևոյթները, որոնք հակառակ կը լինեն իրանց քաղաքականութեանը։ Եթէ Ֆրանսիայի և Սպանիայի ցանկութեան հակառակ, այդ տեսակ պատահականութիւններ ծագեն, այն դէպքում երկու կողմերն էլ իրաւունք ունեն վաղօրօք որոշել իրանց վերաբերմունքը դէպի նրանց. ներկայումս, սակայն, կան միայն 1904 թ. պայմանագրերը և Ալժեզիրասի ակտերը»։ (Հ. Գ.)

—

Լոնդոն, 10 նոյեմբերի

Լորդերի պալատ։ Հասարակութեան մէջ աչքի են զարկում շատ յայտնի գործիչներ և դիպլօմատներ։ Լորդ-կանցլերը իր ճառում բողոք է յայտնում, որ նախագծվում է խախտել սահմանադրական իրաւունքները և դէպի կառավարական օրինագծերը ցոյց տրված այնպիսի վերաբերմունքի դէմ, որպիսին երևան հանեց լօրդերի պալատը վերջին չորս տարիների ընթացքում։ Հռետօրն ասում է, որ ոչ մի լիբերալ կառավարութիւն չէ կարող այսուհետև իշխանութեան ղեկը իր ձեռքն առնել, եթէ երաշխաւորութիւն ստացած չի լինի, որ այդպիսի գործելակերպի չը հանդիպի։ Լէնսդաունը սահմանադրական յեղափոխութեան առաջին քայլն արեց։ (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 10 նոյեմբերի

Ունգարական հեռագրական գործակալութեանը հաղորդում են Վիեննայից, որ առաւօտեան Հօֆբուրգում Ֆրանց-Յօզէֆ կայսրի նախագահութեամբ տեղի ունեցաւ ունգարական մինիստրների նիստը, որ տևեց մի և երեք-քառորդ ժամ։ Նիստից յետոյ Կօշուտը մամուլի ներկայացուցիչներին յայտնեց, որ մինիստրների խորհուրդը մանրամասնօրէն քննեց բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են ճգնաժամը լուծելուն, սակայն առ այժմ վերջնական որոշումներ չեն ընդունված։

Ունգարական մինիստրները երեկոյեան մեկնեցին Բուդապեշտ։ (Հ. Գ.)

—

Պատգամաւորներ Աճէմեան, Գէգէչկօրի և Սաղաթէլեան հեռագիր ստացան Վլադիկավկազից հարիւր հոգու ստորագրութեամբ, խնդրելով միջնորդել կախաղանի դատապարտված Կարապետ Սագալօվի վիճակը թեթևացնելու համար։ Կարապետ Սագալօվը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Դողրի-եոլէն կանցնիմ. Բօն-մարշէի դիմաց գերմանացի նշանաւոր գրավաճառին ցուցափեղկին մէջ միջազգային գեղեցիկ գրքերուն հետ կը տեսնեմ նաև հայերէն գիրք մը. կանգ առնելով կը կարդամ՝ «Յաւերժ հին դէմքերու». սա Մըմըրեանի ինծի ծանօթ վերջին գրքերէն մէկն է։ Նշանաւոր գրավաճառին միակ հայերէն գիրքն է այն։ Մըմըրեան անոր էջերուն մէջ ուրուագրած է կենսագրականը Երեմիա Չէլէպիի, Մխիթար Աբբայի, Նալեան պատրիարքի, Իգնատիոս Մուրատճայ դ'Օհսոնի, Պ. արքեպիսկոպոս Գագոչեանի, Պ. Գրիգորեան պատրիարքի, Տէրոյենցի, Վեհապետեան պատրիարքի, Մամբրէ արքեպիսկոպոս Մարկոսեանի և Ալիշանի հրեշտակներունը։ Մըմըրեան անոնց խոր կենսագրականը բանասիրական գրչով պըպտած ըլլալով, հարկ չկայ ծանօթացնել թէ իրօք ինչ արժէք ունին անոնք. սակայն ընթերցողը անոյշ սնափառութեամբ պիտի ուզէ կարդալ անոր էջերուն մէջ գտնուած Մուրատճայ դ'Օհսոնի կենսագրականը։

Եւ ինչ զուգադիպութիւն...

Մըմըրեանի այդ գիրքը զիս կը թելադրէ, որ նոյն գրավաճառին կրպակը մտնեմ. հիացումս հազիւ կրնամ զսպել, երբ իմ առջև կը հանեն ամենէն նշանաւոր մատենադարաններէն պակաս Մուրատճայ դ'Օհսոնի տիեզերահռչակ կոլոսալ հեղինակութիւնը՝ «Ընդհանուր պատկեր օսմանեան հարստութեան»։ Սա այն սքանչելի գործն է, որ մեծանուն պատմաբաններու աղբիւր է եղած և նոյն ինքն մեծահամբաւ Համմէր իր բազմահատոր օսմ. պատմութեան առաջին աղբիւր է ընդունած հայ հեղինակին այդ գործը։ Ես սկսայ թերթել անոր մեծածաւալ էջերը. հոյակապ գործ, սքանչելի տպագրութիւն, պատկերները շատ մաքուր փորագրուած. ամբողջ գործը ֆրանսերէն է. երրորդ հատորը գրած է իր որդին։ Պիտի ցաւիմ, եթէ առանց հայ մատենադարանի մը զարդ չըլլան. պիտի խնդրեմ, որ պոլսեցի խմբագիրները «Իկդամի» խմբագրին երկար խմբագրականներ հրամցնելու տեղ, անոր ձեռքէն բռնելով, յիշեալ գրավաճառին քով տանին և ցոյց տան, որ նոյնիսկ հայ մըն է եղած, որ օսմ. պատմութեան աղբիւր կըլլայ հին օրերէն սկսեալ։ Ու պիտի իմանայ թիւրք խմբագիրը, որ հայը օսմ. պետութեան մտքի լոյս տուած է ու կրնայ տալ։

*

Կամուրջէն կանցնիմ Ստամբուլի կողմը. այդտեղ է համախմբուած մայրաքաղաքին տնտեսագիտական գործունէութիւնը։

Ճիշդ ժամը 8-ին կը սկսի աչքի զարնող աշխուժութիւն մը. սաթըլճըներուն ժխորային պոռչտուքը Ստամբուլի մէջ այնքան տաղտկալի չէ, որքան Պերայի թաղերուն մէջ. օրուան պարէնին համար յատուկ խանութները հոս նշմարելի են, մինչդեռ Պերայի կողմերը այդ կրպակներու պաշտօնը շրջուն սաթըլճըներուն է յանձնուած։

Հոս Ստամբուլի մէջ կեդրոնացած են առևտրական մեծ խանները. և այս կողմերը շէնքերու վարձքը շատ նուազ ըլլալով, ամեն ազգի լրագրական տպարանները բնականաբար հոս են հաստատուած։

Իմ առաջին պարտականութիւնս էր այցելել համեստ հայ գրավաճառ մը։ Առաջնորդս թէև տարիներով Պոլիս էր մեծցած, սակայն անծանօթ էր Ստամբուլի մանուածապատ լաբիւրինթոսական փողոցներուն։ Հոս Ստամբուլի մէջ տեղ փնտռելով, կարելի է դիւրաւ գաղափար մը առնել թիւրքական թաղերուն վրայ. մոլորուած կը թափառիմ փողոցէ փողոց. հարց ու փորձը օգուտ չունի. հազիւ կը բարեհաճին պատասխանել, և միշտ սխալ կողմեր ցոյց կուտան։ Մահմուդ փաշայի զառիվեր փողոցներէն կը բարձրանամ, և ամեն մէկ կողմէ ճաթած ու աղճատ ֆրանսերէնով մը ջուտներ կը հրաւիրեն իրենց կրպակներէն իր մը գնելու։ Առհասարակ այս կողմերը կրպակներուն մէջ չկայ հիացումի առարկայ ոևէ ապրանք մը։ Ամենամեծ զգուշութեամբ աչքս միշտ գետին, ուշադրութեամբ կը քալեմ, որ անակնկալ փոսի մը մէջ չսայթաքիմ կամ շուներուն կականաբարձ կաղկանձումին պատճառ չըլլամ։

Երկար թափառումէ յետոյ հուսկ ուրեմն Զաքմաքճըլար փողոցի զառիվերէն սկսայ վար իջնել և գտայ փոքրիկ կրպակ մը, ամբողջ պատերը գրքերով գոցուած։ Վահան Զարդարեանը գրքերու մէջ թաղուած կաշխատէր. բռնեցի անոր ձեռքը. ես այդ համեստ անձնուիրութեան համար յատուկ յարգանք մը ունիմ. բանտէ բանտ առաջնորդուած, հին թիւրքէն միշտ հալածուած ամենէն արդար, ամենէն լուրջ, համեստ մարդն էր ան, անխռովօրէն կլած էր համիդեան խոշտանգումը։ Ես այդ անձնուիրութիւնը կը համարիմ ներկայ թիւրքահայ գրողներուն ամենէն աւելի օգտակար մարդը. չեմ գիտեր՝ բռնութի՞ւնը թէ գրական տաժանելի զբաղումը խոռոչացուցած են անոր աչուըները։ Զուտ գրագէտի նկար կազմութիւնը կը մատնէ, որ ան գրքերու մէջ կը հիւծի. վանականի մը համբերութեամբ կը պատրաստէ «Յիշատակարանը», որուն երկու պրակներն արդէն հրատարակուած են. այդ հոյակապ աշխատութիւնը լռութեան դատապարտելու նուաստութենէն կը զգուշանամ։ Մեծ խանդավառութեամբ ընդունելութիւն գտնելու արժանի է այդ. 1512—1913 մեր մատենագրական կեանքի յիշատակարանն է այն. խստապահանջ բանասէրի մը քննադատական հոգւով գրուած չէ այն, այլ կը կրէ այն ոճը, ինչ որ կը պահանջուի կենսագրական բառարանէ մը։ «Յիշատակարանին» մէջ էջեր ունին մտքի գործիչները. անոնց կենսագրականը զարդարուած է կենդանագրով և իւրաքանչիւր հեղինակի գրքերուն կողքի պատկերով և կարևոր գըրուածոց բնագիր կլիշէներով։

Այս հատորի աշխատութեան առաջին կենսագրականներն են՝ Խրիմեան Հայրիկ, Միքայէլ Նալբանդեան, Յարութիւն ամիրա Պէզճեան, Պօղոս Օտեան, Արմենակ Հայկունի, դոքտոր Յ. Բեթթիլեան. իսկ երկրորդ պրակին կենսագրականներն են՝ Ղուկաս կաթողիկոս, Ֆիլիքա Պօղոս պատուելի, սահմանադրութիւն հաստատողները, Մկրտիչ ամիրա Ճէզայիրլեան, Կարապետ վ. Շահնազարեանց։ Ժրաջան հեղինակը ամեն ամիս կը հրատարակէ իր «Յիշատակարանին» մէկ պրակը. կերպով մը կենսագրական ամսաթերթ մը համարելու ենք զայն. հոս Պօլսոյ մէջ անհատ գրական ամենէն գնահատելի գործը, որուն արժանիքը անուրանալի է. զարմացայ, երբ լսեցի որ խմբագիր մը զայն ընդունած ըլլալը իր թերթին մէջ յայտարարելու համար՝ աղքատ հեղինակէն դրամ պահանջելու անհամեստութենէն չէ զգուշացած։ Անհոնօրէն անամօթութիւն է այս... Եւ սակայն նոյն խմբագիրը այս կամ այն վաճառականը կամ տէր-հայրը երբ գաւառէն Պոլիս հասնի, իսկոյն ազգային քրոնիկներուն մէջ այդ գալուստին լուրը յայտարարելուն անփոյթ չըլլար։ Արդեօք փոխադարձ վարձատրութիւն մը կունենայ նոյն անձերէն...

Ես սխալեցայ. տեղական լրագրական հիւանդ բարքերուն վրայ խօսելու դիտաւորութիւն չունիմ առ այժմ։ Համեստ առողջ բարքերուն հետապնդելու ենք. ասոր օրինակը Զարդարեան գրատան մէջ կը գտնեմ. կը հարցնեմ «Յիշատակարանի» հեղինակին, թէ ինչպէս կարող կըլլայ այսպիսի ծանր աշխատանք մը գլուխ հանելու. կը պատասխանէ։

— Ամբողջ օրը այս կրպակին մէջ գրավաճառութեամբ կը պարապիմ, գիշերները կը պատրաստեմ «Յիշատակարանը». կը ստիպուիմ տղուս օրօրոցը օրօրել, որ ճուալով արգելք չըլլայ գրութեանս։

Ու ես մտածեցի, որ վանականներու յատուկ այս գործը՝ նիւթական ապրուստի ծանր բեռան տակ ընկճուողն ալ կրնայ ուրեմն պատրաստել. բաւական է կամք, յարատևութիւն, ինչ որ չեն պակսիր մեր մէկ քանի հեղինակաց, որոնց շարքին մէջ Զարդարեան մոռցուած չըլլալու համար այս երկտողս կը նուիրեմ իր գրական յիշատակին։

Ճոխ մատենադարաններու տէր վանականներու գործը փոխանցուած կը տեսնեմ բազմազբաղ աշխարհիկ գրագիտաց։ Ե.

Կ. Պոլիս, 26 հոկտ.

կասկածվում է փնդապետ Իստոմինի սպանութեան մէջ։ Հեռագիրը յանձնված է Ն. Ա. Խոմեակովին, որը անձամբ կը միջնորդի զինուորական մինիստրի մօտ։ («Б. В.»)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Որպէս հաղորդում են Կ. Պօլսի լրագիրները, Բասրայի վիլայէթում ընդհարում է տեղի ունեցել Թիւրքաց զօրքերի և ապստամբների միջև։ Ապստամբները ծանր կորուստներ են կրել։

Մտցված են Թիւրքական պարլամենտը մի շարք հարցեր Յունաստանում և Կրետէ կղզու վրա տեղի ունեցող դէպքերի առիթով։

Եըլդըզ-Քեօշկում, որպէս հեռագրում են «Р. Сл.» լրագրին, գտնվել է մի դօկումէնտ, որ վերաբերում է Միդհատ-փաշայի գործին սուլթան Աբդիւլ-Ազիզի սպանութեան հարցում։ Այդ դօկումէնտը, որ դիւրացնում է այն դատը, որի մասին անդադար աշխատում են Միդհատ-փաշայի որդիքը, ուղարկված է արդարադատութեան մինիստրի քննութեանը։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 28 հոկտեմբերի

Երիտասարդ Թիւրքիան վերջապէս սկսել է ըմբռնել, որ պէտք է փոխել համիդեան ռէժիմի տակտիկան։ Այդ ռէժիմի օրով հային սպանելը ոճիր, յանցանք չէր համարվում. այն մուսուլմանը, որ սպանում էր հային, պատժի չէր ենթարկվում, այլ մինչև իսկ արժանանում էր վարձատրութեան և գովասանքի. օրինակ՝ համիդիյէ հեծելազունդը, որի բոլոր արժանիքը կայանում էր հային սպանելու ու թալանելու մէջ։

Իսկ այժմ Դէպքերը ցոյց են տալիս, որ պիտի փոխել այդ հրէշային տակտիկան։ Ինչպէս գիտէք, մի ամիս առաջ Ադիլջեվազի գաւառակում վեց հայեր մորթվեցին։ Վալին՝ Բէքիր Սամի բէյ՝ շատ զգացվեց այն եղեռնագործութիւնից և յայտարարեց, որ այդ ոճիրը գործվել է ուղղակի նրա պրեստիժը կոտրելու համար և սարքվել է իր թշնամիներից. իսկ եթէ ինքը չը կարողանայ մինչև մի ամիս ձերբակալել ոճրագործներին և լուծել ոճրի գաղտնիքը, այդ դէպքում իրան մնում է հրաժարվել ու քաշվել գործից իբրև մի անպէտք փալասի կտոր։

Վալին յիրաւի տէր մնաց իր խոստումին. զօրքեր, ոստիկաններ ու կարող ճանաչված պաշտօնեաներ ճամբեց ոճրի տեղը, որոնց աջողվեց գտնել ու ձերբակալել ոճրագործներից և նրանց պաշտպաններից 12 անձերի, որոնց վրա գտնվել են յայտնի ապացոյցներ, մինչև իսկ սպանվածների շորերը։ Նրանք մօտ օրերս պիտի բերվեն անշուշտ Վան և, ինչպէս վալին խոստացել է, կախաղանների վրա պիտի կրեն իրանց արժանաւոր պատիժը։

Մեր վալին Երզրումի երբեմնի սիրված հրամանատար Մուսա փաշայի որդին է, սովորել է Պարիզի քաղաքական գիտութիւնների ուսումնարանում, լաւ տիրապետում է ֆրանսերէնին, եղել է հիւպատոս Մալթա կղզում և կառավարիչ Ամասիայում։ Արդարասէր է նա և անաչառ, յատկութիւններ՝ որոնք այնչափ հազուագիւտ առաքինութիւններ են Թիւրք պաշտօնեաների մէջ։

Գրել էի, որ շէյխ Իբրահիմ-ուլլահի որդի Աբդիւլ Կադէրը Կ. Պօլսից Վան գալով ուզում է համերաշխութիւն հաստատել երկրի հայ, Թիւրք և քիւրդ ազգերի մէջ և այդ նպատակով այստեղ կանչել էր քիւրդ ցեղապետներին ու խօսել էր հայոց առաջնորդի և երևելիների հետ, իմանալու համար նրանց անբաւականութիւնների պատճառներն ու հաշտութեան պայմանները։

Հոկտ. 19-ին Աբդիւլ Կադէրը Իթթիհադի կլուբում հրաւիրեց երեք ազգութիւնների գլխաւորներին, ուր նրանք հանդիսաւոր կերպով երդուեցին հաւատարիմ մնալ հայրենիքին, սահմանադրութեանը և ազգերի համերաշխութեանը։ Ներկայ էր մօտ 300 մարդ. տեսարանը հետաքրքրական էր ու շշմեցնող. այնտեղ իրար հետ կողք կողքի նստել և եղբայրութիւն, համերաշխութիւն էին ուխտում իսլամ և քրիստոնեայ կրօնապետներ՝ իրանց կանաչ ու ճերմակ փաթթոցներով և սև գլխանոցներով. այնտեղ էին նաև քիւրդ փաշաներ, բէյեր, աղաներ, որոնք դարերից ի վեր սպանել, թալանել են հայերին, և հայ վաճառականներ, պաշտօնեաներ ու երևելիներ. այնտեղ էին վալին և Թիւրք ազդեցիկ էֆէնդիներ, կառավարութեան պաշտօնեաները, որոնց թւում քիչ չէին նրանք, որոնք չար խորհուրդներ են տածում հայերի հանդէպ։

Երեք ազգութիւններից էլ խօսողներ եղան ազգութիւնների միաբանութեան, իսկ հակառակ դէպքում հայրենիքին սպառնացող վտանգների վրա։ Հետաքրքրական էր մի քիւրդ ցեղապետի խօսածը. դա Մոկաց յայտնի մարդասէր Մըթուլլահ բէյն էր։ Նա, ինչպէս բոլոր խօսողները, չարիքի արմատը համարելով համիդեան բռնապետութիւնը, ասաց. «Մենք քիւրդերս այդ բռնապետական կառավարութեան որսի շներն էինք. նա մեզ ուղարկում էր որսի, բերում էինք որսը, իսկ կառավարութիւնը պոկում էր նրանից համեղ կտորները, պարարտ միսերը և մեզ թողնում էր ոսկորները, որոնց մենք կրծում էինք. Եւրոպայում շներին կրթում են, լսել ենք մենք. մենք հօ շներից լաւն ենք. կրթեցէք մեզ»։

Այս ընդհանուր համաձայնութիւնից յետոյ քիւրդ ցեղապետներն ստորագրեցին մի հաւաքական գրութիւն և յանձնեցին հայերին, որով խոստանում են այսուհետև եղբօր պէս ապրել հայերի հետ, վատերին, սպանողներին, թալանչիներին չը պահպանել, օգնել արդարադատութեան գործին, առաւելն մինչև առաջիկայ գարունը յանձնել հայերին՝ նրանցից գրաւած հողերը և կալուածները, իսկ այն հողերը, որոնք հայ տէրերի բացակայութեան միջոցին ծախվել ու իրանք գնել են և այժմ նրանց օրինական տէրերը համարվում են իրանք քիւրդերը, արդար դատավարութիւնից յետոյ խոստանում են մեզ՝ հպատակվել օրէնքին և արդարութեան վճռին։

Հաւատանք արդեօք, որ Թիւրքիայում մի նոր դարագլուխ է բացվել և թէ այսուհետև տիրելու են այնտեղ օրէնքը, արդարութիւնը, ազգերի համերաշխութիւնը և եղբայրութիւնը, որոնց մենք հայերս այնչափ անձկանօք սպասում ենք։ Մտրակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Չեմ կարող չը յայտնել իմ ուրախակցութիւնը Ա. Քալանթարի գիւղատնտեսական 30-ամեայ գործունէութեան յօբելեանը տօնելու համար, որ որոշված է կատարել նոյեմբերի 21-ին Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան նախաձեռնութեամբ։

Թողնելով մի այլ անգամի առանձին խօսելու մեր հասարակական գործիչի բեղմնաւոր գործունէութեան մասին, ես այժմ կուզենայի առաջարկել.

1) Ժամանակը յետաձգել, կարճ միջոց է նշանակված, ընկերութեան ծանուցումը յօբելեանի մասին ուշ է յայտնվում լրագրութեան մէջ, այնպէս որ դա կարող է մի մասին գոհացնել, միւս մասին՝ ոչ։ Օրինակ՝ Թիֆլիսը և մօտիկ քաղաքները, գաւառները ժամանակին կարող են իրանց շնորհաւորութիւնները և ներկայացուցիչներն ուղարկել, բայց Ռուսաստանի սահմաններից դուրս ապրողներն ինչպէս պիտի մասնակցեն հեռաւոր վայրերից։ Եւրոպայում նստած համակրողներից շատերը յօբելեանի լուրը այն ժամանակ են լսելու, երբ արդէն ամեն ինչ կատարված-վերջացված կը լինի։ Դրանով նրանց թէ վիրաւորած կը լինենք և թէ ժամանակին ազատօրէն զգացումներ արտայայտելու հնարաւորութիւնից զրկած։

2) Ընկերութիւնը խոստանում է «լոյս ընծայել յօբելեանական ժողովածու յօդուածների, գիւղատնտեսութեան զանազան հարցերի, նախաձեռնարապէս անասնապահութեան և կաթնատնտեսութեան մասին»։ Իմ կարծիքով, լաւ արած կը լինի ընկերութիւնը, եթէ յօբելեանական ժողովածուի մէջ մտնէին բոլոր ուղերձ-գրութիւնները և յօբելեանի ժամանակ արտասանված ճառերի բովանդակութիւնները. բայց այդ՝ և այն յօդուածները, որոնք լոյս են տեսնելու յօբելեանից առաջ և յետոյ, մեր և արտասահմանեան պարբերական թերթերում։ Յօբելեանական ժողովածուն, մի խօսքով, լինի դուտ նկարագիր միջազգային հողի վրա դրված և գիտական ու գաղափարական նշանակութիւն ունեցող այդ տօնախմբական հանդէսի։

3) Յօբելեանից առաջ պէտք է հրատարակել կենսագրական ժողովածու, որ լինի ընորոշված տեսութիւն Ա. Քալանթարի գրական-հասարակական գործունէութեան։ Դրա մէջ պէտք է հրատարակել Ա. Քալանթարի այն ընտիր ուսումնասիրութիւնները, որոնք վերաբերում են գիւղատնտեսական զանազան հարցերին։ Այդ ժողովածուն պէտք է տարածել գաւառները, գիւղացիութեան բոլոր խաւերում։ Դրանով հայ գիւղացին աւելի ճիշդ և լաւ կը ճանաչէ յօբելեարին որպէս գրական դէմք և որպէս գլխաւորապէս գիւղատնտեսական գործիչ։ Թողէք առաջ գայ և լայն արձագանք տայ այն գիւղացին, որը աւելի շատ է օգտվել յարգելի յօբելեարի մատուցած խոշոր գիւղատնտեսական գործունէութիւնից։

4) Ընկերութիւնը յօբելեանի մասին պէտք է առանձին նամակաձև թերթիկների վրա յայտարարութիւններ տպէ և տարածէ ամեն գաւառ, ամեն գիւղ, առաջարկելով կազմել տեղական ազգայիններից խմբակներ, ընկերակցութիւններ, որոնք միահամուռ ոյժերով ներկայացումներ, երեկոյթներ տային և հասցնէին դրամական նուէրներ։ Այո, պէտք է զարկ տալ և նիւթական կողմին։

Հետաքրքրական է իմանալ «Մշակի» խմբագրութեան և միւս աշխատակիցների կարծիքները այս հարցի մասին։

Գրիգոր Բալասանեան

Յ. Գ.—Բոստոնի «Ազգ» թերթի մէջ տպված է Ատրուշանի լուրջ քննադատական ուսումնասիրութիւնը Ա. Քալանթարի հրապարակախօսական և գրախօսական գործունէութեան մասին։ Խորհուրդ կը տայի արտատպել թէ «Մշակի» էջերում և թէ առաջարկածս հրատարակելի կենսագրական ժողովածուի մէջ։ Նոյնը

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նիժ (Նուխու գաւ.), 8 նոյեմբ.

«Մշակի» № 232-ում յիշել էի տեղիս ծխական երկդասեան դպրոցի նոր հոգաբարձութեան աջող ընտրութեան մասին։ Այժմ ուրախութեամբ պէտք է արձանագրել, որ նոր հոգաբարձութիւնը անցնելով գործի գլուխ՝ չէ խնայում ոչ մի ջանք, հարթելու դպրոցի բոլոր պակաս կողմերը, որ նախկին տարիներում մատնված էր եղել կատարեալ անուշադրութեան։

Գիւղացիները, որ այնքան սառած էին դպրոցից և դպրոցը համարում էին մի աւելորդ բեռ, այժմ, տեսնելով նոր հոգաբարձութեան եռանդուն գործունէութիւնը դէպի դպրոցը և միանգամայն վստահ լինելով նրա ոյժի վրա, հետզհետէ մօտենում են դպրոցին, յայտնում են իրանց պատրաստակամութիւնը և խոստանում են աջակցել հոգաբարձութեանը, միայն թէ դպրոցը դրվի կանոնաւոր հիմքերի վրա և ծառայէ իր նպատակին։

Աւելորդ չեմ համարում յիշեցնել հոգաբարձութեանը, որ, եթէ հնարաւոր է, դպրոցի թէ անցեալ և թէ ներկայի բոլոր մանրամասն հաշիւները կանոնաւորվեն և արձանագրվեն ժապաւինեալ մատեանում և տարին մէկ կամ երկու անգամ հաշիւ ներկայացվի հասարակութեանը, որով կասկածաւորների կարծիքը փոխելով՝ մեծ ծառայութիւն արված կը լինի դպրոցին։ Ներկայ հոգաբարձութիւնը այդ անելու հնարաւորութիւն ունի, և հաւատացած ենք, որ անուշադրութեան չի մատնվի այդ կարևոր հարցը։

Չը մոռանամ յիշել նոյնպէս, որ գիւղացիները խնդրով դիմել էին նահանգական սանիտարական վարչութեանը և խոստացել էին վճարել իւրաքանչիւր տարի 2500 ր., որպէսզի գիւղում բացվի ձրի դեղատուն և հիւանդանոց իր բժշկով։ Նոր տանուտէրի ընտրութեան օրը, այդ նոյն հարցը արծարծվեց հաշտարար միջնորդ Սուլթանովի կողմից. նա յայտնեց, որ խնդրի պատասխանը եկել է, և որ, բացի գիւղացիների խոստացված 2500 ր., պահանջվում է նոյնպէս յարմարաւոր շինութիւն հիւանդանոցի և դեղատան համար իր բոլոր պարագաներով և վառելիքով։ Սակայն հասարակութիւնը խնդրեց, որ եթէ հնարաւոր է խոստացված գումարից աւելի ծախս չը պահանջվի և բացվի հիւանդանոցը։ Սուլթանովը խոստացաւ յայտնել հասարակութեան կամքը նոյնութեամբ։ Բայց այսօր կողմնակի աղբիւրներից լսում ենք նահանգական բժշկապետ Տէր-Գրիգորեանի կարծիքը՝ տեղումս հիւանդանոց չը բացվելու վերաբերմամբ, որը այդ եզրակացութեան է եկել Սուլթանովի հաղորդագրութիւնից. որ իբրև թէ գիւղը, գտնվելով ծանր պարտքերի տակ, հազիւ թէ հնարաւորութիւն ունենայ իւրաքանչիւր տարի այդպիսի մի պատկառելի գումար վճարելու։ Լուրը ճնշող տպաւորութիւն թողեց գիւղացիների վրա, և ցաւում ենք, որ այդպիսի մի կարևոր հիմնարկութիւն, մանաւանդ մալարիայի բոյն Նիժի համար, թիւրիմացութեան պէտք է զոհվի։

Բժշկապետի ուշադրութիւնն ենք գրաւում այս կարևոր հարցի վերաբերմամբ և յայտնում ենք, որ հասարակութիւնը պատրաստ է վճարել խոստացած գումարը իւրաքանչիւր տարի և խնդրում է բժշկի աջակցութիւնը։

Լիայոյս ենք, որ բժշկապետը նիժեցիների խնդիրը անուշադրութեան չի մատնի, բանալով հիւանդանոցը, և կազատէ գիւղացիներին զանազան հիւանդութիւններից, գլխաւորապէս մալարիայի քայքայիչ ազդեցութիւնից։

Նորեկ-ուստի

Գանձակ, 8 նոյեմբերի

Մեր շրջանի գիւղերից մեծ մասը զրկված է, բառիս լայն մտքով, բժշկական օգնութիւնից։ Կան գիւղեր, որոնք մօտ գտնվելով քաղաքին և ճանապարհի յարմարութիւն ունենալով, հնարաւորութիւն ունեն սայլերով կամ կառքերով իրանց հիւանդին տեղափոխել քաղաքիս հիւանդանոցը և օգտվել դեղատներից և բժիշկներից։ Բայց կան այնպիսի գիւղեր, որոնք տասնեակ վերստերով հեռու գտնվելով քաղաքից, ոչ մի յարմարութիւն չունեն քաղաքի հետ կապ պահպանել մի որևիցէ դժբաղդութեան դէպքում. Նրանք ընդմիշտ մատնված են լինում ճակատագրի անողոք հարուածներին։

Այդպիսի գիւղերից մէկն է 800 տնից բաղկացած Փիբ գիւղը, ուր անցեալ տարի տիֆը կարողացաւ համաճարակի բնաւորութիւն ստանալ. տիֆը օրական 3—4 զոհ էր տանում, որի աւերումների մասին իր ժամանակին գրվեց «Մշակի» մէջ։ Քաղաքիս նահանգական սանիտարական խորհուրդը, մի ամսից յետոյ ուղարկելով Փիբ մի օգնական բժիշկ, կարող եղաւ, 87 զոհ տալուց յետոյ, հազիւ արմատախիլ անել չարիքը, որ և արժանի է շնորհակալութեան։

Սանիտարական խորհուրդը, նկատի առնելով Փիբի հեռաւորութիւնը, ճանապարհների անյարմարութիւնները և նրա քաղաքից կտրված լինելը, որ նոյնանման դէպքերի միջոցին անմիջական օգնութիւն հասցնելը դժուարին կը լինի, որոշեց բանալ Փիբում դեղատուն մի օգնական բժշկով, ընդմիշտ ապահովելով Փիբը և նրան կից գիւղերը բոլոր վարակիչ հիւանդութիւններից։

Այժմ լսում ենք, որ Փիբում հիմնվելիք դեղատունը մտադրութիւն կայ բանալ Բանանց գիւղում, որը քաղաքից բաւական մօտ գտնվելով՝ յարմարութիւններ ունի օգտվելու քաղաքի հիւանդանոցներից, դեղատնից և բժիշկներից։ Բացի այդ, Բանանցը, իբրև ապահովված գիւղ, կարող կը լինի, եթէ ցանկանայ, նոյնանման մի դեղատուն հիմնել. այն-ինչ որոշված է բանալ Փիբում, որի բնակիչները, ընդհանրապէս, նիւթապէս ընկած են։

Բանալով Փիբում դեղատունը, կունենայ իր որոշ նշանակութիւնը և յարմարութիւնները, այն է, առաջին՝ Փիբը իրան մօտ գիւղերի մէջ ամենաբազմամարդ գիւղն է (800 տ.) և ունի աւելի մեծ կարիք, քան թէ Բանանցը, որ 360 տուն է, և որը բաւական մօտ է քաղաքին։ Երկրորդ՝ Բարհաւ, Կիրանց, Խաչակապ, Զօվդար, Նիւգդար գիւղերը աւելի յարմարութիւններ ունեն կապ հաստատելու Փիբի հետ, քան թէ Բանանցի։ Երրորդ՝ դեղատուն անհրաժեշտ է բանալ այնտեղ, ուր վարակիչ հիւանդութիւնները յաճախ են կրկնվում։ Անցեալ տարի տիֆը Փիբում իր աւերումներով 87 մարդու կեանք խլեց, իսկ միւս գիւղերը համարեա ազատ մնացին։

Յոյս ունենք, որ քաղաքիս սանիտարական խորհուրդը նկատի կառնի վերոյիշեալ յարմարութիւնները և իր որոշումը, կատար ածելով, դեղատունը կը հիմնի Փիբում, յարմարութիւն ստեղծելով նրան կից գիւղերի համար և ընդմիշտ ազատելով Փիբ գիւղը զանազան վարակիչ հիւանդութիւններից, որտեղ յաճախ է կրկնվում։ Սպասենք և յուսանք։ Սարգօ

Ստաւրօպօլ, 5 նոյեմբերի

Տեղ. հոգաբարձութեան հրաւէրով, հոկտ. 18-ին ժողով էր հրաւիրված բոլոր ծխականներից՝ դպրոցի և եկեղեցու անյետաձգելի կարիքների մասին խորհրդակցելու համար։ Ժողովին նախագահում էր հոգաբարձութեան նախագահ Գէորգ Այվազեան։ Նախագահը մէկ-մէկ թւելով եկեղեցու և դպրոցի կարիքները և այն պարտքերը, որոնց մէջ ընկել է դպրոցը հասարակութեան անտարբեր վերաբերմունքի և արտաքոյ կարգի ծախսերի (վերանորոգութեան) և այլ պատճառներով յայտարարեց, որ այս դժուար կացութիւնից ազատվելու միակ միջոցը հոգաբարձութիւնը գտնում է նրա մէջ, որ պէտք է բոլոր ծխականների վրա տարեկան տուրք նշանակել։ Ժողովականները յայտնեցին իրանց համաձայնութիւնը։ Նախագահը հոգաբարձութեան կողմից յայտնեց, որ տարեկան հարկաւոր է 1700 ր. (որից 1400-ը դպրոցի համար)։ Ձայների ճնշող մեծամասնութեամբ ընդունվեց այդ առաջարկութիւնը։ Ապա ընտրվեց 13 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որը պիտի թէ տուրքերը մասնադրէ և թէ հաւաքելու մասին պիտի հոգայ, որ լինելու է տարեկան 2 անգամ։

«Бинокль» ծածկանուան տակ թագնված մի պարոն տեղիս «Сѣверокавказская Газета» թերթում փորձում է բացատրել, թէ ինչ պատճառներով դպրոցն ու եկեղեցին այս վատ օրերին են հասել։ Բայց խիստ պատէպատ է ընկնում և բուն խնդրից շեղվելով, կարծես անձնական հաշիւներ մաքրելիս լինի, հայհոյանքներ է թափում գլխաւորապէս հոգաբ. նախագ. Գ. Այվազեանի հասցէին, մի մարդու, որը տեղիս հայ հասարակութեան մէջ ամենաօգտակար անձնաւորութիւններից մէկն է համարվում։ Նրան մեղադրում է մանաւանդ այն բանում, որ երգեցողութեան ուսուցչի պաշտօնից արձակել է տեղիս տիրացու Գուլաբեանին՝ աղքատութեան դուռը հասցնելով նրան։ Հոգաբարձութիւնը պատասխանեց, որ նա աղքատ չէ, այլ այնքան հարուստ, որ տոկոսներով փողեր է տալիս սրան-նրան, իսկ գլխաւոր պատճառն, ինչպէս երևում է, այն է, որ նա իր կրթութեամբ և պատրաստութեամբ միանգամայն անհամապատասխան է այդ պաշտօնի համար, թէև մի քանի տարի շարունակ վարել է այդ պաշտօնը։ Թէ որքան անաչառ թղթակից է Бинокль ը, այդ կարելի է դատել և նրանից, որ այժմեան երգեցողութեան ուսուցիչ-քահանայի մասին գրում է թէ՝ «նօտայից բան չէ հասկանում», մինչդեռ նա հանգուցեալ Եկմալեանի աշակերտներից է և նրա խմբումն էլ երգել է երկար ժամանակ։ Հայ հասարակութեան լաւագոյն մասը խիստ զայրացած է այդ յօդուածների առիթով, որովհետև ռուս հասարակութեան առջև իրանց ներկայացնում են շատ տխուր գոյներով, մանաւանդ որ յօդուածագիրը հայ չէ, բայց նրան թելադրողները մի-երկու «խակական հայեր» են։ Խաչ. Տէր Ենօքեան

Երևան, 1 նոյեմբերի

Այսօր առ. ժամը 12-ին նշանակված էր ժողովրդ. տանը դասախօսութիւն, որ կազմակերպել էր Երևանի օգտակար գիտելիքներ տարածող ընկերութիւնը։ Հոկտեմբեր ամսի վերջերին դասախօսեց ուսուցչական սեմինարիայի տեսուչ Ստրելկին ռուսերէն լեզուով և, ինչպէս լսեցինք, շարունակելու է մի շարք՝ 5—7 դասախօսութիւններ մանկավարժութիւնից՝ վերոյիշեալ ընկերութեան նախաձեռնութեամբ և օգտին։

Այսօրվայ դասախօս Ե. Ֆրանգեանը բացեց հայկական դասախօսութեան շարքը և, ինչպէս լսեցինք, այս սեզօնում դասախօսելու է 7—9 անգամ փիլիսոփայութեան մասին։ Այսօրվայ դասախօսութիւնը, որը կրում էր «Ինչ է փիլիսոփայութիւնը» վերնագիրը, կազմում էր այդ շարք դասախօսութիւնների առաջինը։ Սրանից յետոյ հերթով իւրաքանչիւր շաբաթ երեկոյեան և կիրակի առաւօտեան տեղի են ունենալու սիստեմատիկ դասախօսութիւններ ժողովրդին մատչելի գներով. իւրաքանչիւրը վճարում է 10 կոպէկ։

Ե. Ֆրանգեանը նախ քան իր բուն խնդրին անցնելը շօշափեց մի կարևոր հարց, փիլիսոփայութեան գոյութեան հարցը։

Շատերը կասկածում են, որ փիլիսոփայութիւնը, իբրև այդպիսին, այլևս գոյութիւն չունի. այդ տարակուսանքը նա աջող կերպով փարատեց, ապացուցելով, որ փիլիսոփայելը կազմում է մարդու մի էական և ընդհանուր ֆունկցիան, նրա էական յատկութիւնը, և նա պնդեց հետևեալէս, որ քանի մարդը գոյութիւն ունի, գոյութիւն կունենայ նաև փիլիսոփայութիւնը։ Ճիշդ է, նա հետզհետէ ստանում է իրական, բէալ բնոյթ և թողնում է ծայրայեղ բնազանցական տարրերը։ Փիլիսոփայութիւնը ոչ թէ դատարկ գլուխների գործ է, ինչպէս շատերն են պնդում, այլ, ընդհակառակը, ինչպէս դասախօսը շեշտեց, ամեն մէկ մարդու գործն է, քանի որ փիլիսոփայելը մարդու էութիւնն է կազմում։ Սրանից յետոյ նա անցաւ բուն խնդրին։ «Փիլիսոփայութիւն» բառը ունի յունական ծագում, որը նշանակում է սէր դէպի իմաստութիւնը։ Փիլիսոփայութեան ծագման վերաբերութեամբ կան աւանդութիւններ, որոնք վերագրվում են Պիւթագորասին և Սօլօնին. բայց փիլիսոփայութեան հայրը համարվում է իսկապէս յոյն փիլիսոփայ Թալէսը, որը ապրում էր 640—550 թ. Ք. ծ. ա.։ Յետոյ դասախօսը տուեց փիլիսոփայութեան պատմութեան մէջ առաջ եկած փիլիսոփայութեան դեֆինիցիաները. նա կանգ առաւ յունական փիլիսոփայութեան վրա, յիշեց այդ շրջանից փիլիսոփայութեան դեֆինիցիաներ. անտիկ-աշխարհում փիլիսոփայութեան կողքին չէր ճանաչվում մի այլ գիտութիւն, մինչև Աղեքսանդրեան դարը (III)։ Արիստոտելով սկսվում է գիտութիւնների շերտաւորումը, որը մինչև այժմ էլ շարունակվում է։ Յիշեց նաև յետագայ դարերում երևան եկած խոշոր մտածող փիլիսոփաների որոշումները փիլիսոփայութեան հասկացողութեան մասին։ Թէև կան մարդիկ, որոնք ըմբռնում են փիլիսոփայութիւնը շատ միակողմանիօրէն—և դրանք սխալ են—ինչպէս միջնադարեան եկեղեցու իդէօլօգ հայրերը փիլիսոփայութեան տակ այլ բան չէին հասկանում, քան աստուածաբանութիւն։ Նոյն միակողմանիութիւնն է նաև Լիպսի, այդ յայտնի հոգեբանի, ըմբռնողութիւնը. նա փիլիսոփայութիւնը նոյնացնում է հոգեբանութեան հետ։ XVIII դարի անգլիացի էնպերիկները,—Գալիլէյ, Նիւտօն, Յօպս,—այլ բան չէին հասկանում փիլիսոփայութեան տակ՝ քան բնափիլիսոփայութիւն. բայց դրանց դիմաց կան մի շարք խոշոր մտածողներ, որոնք տալիս են փիլիսոփայութիւնը ընդգրկող բովանդակութիւն, իբր մի ընդհանուր համայնապարփակ գիտութիւն։ Դրանցից նա յիշեց հետևեալ անունները՝ Բէկօն, Դեկարտ, Շիլինգ, Սպենսեր, Պաուլսէն, Վունդ, Զիմել և այլն։

Այսպէս զարգացնելով իր թեման և միտքը նա հասաւ այն եզրակացութեան, որ փիլիսոփայութիւնը պէտք է տարբերել մասնակի փիլիսոփայութիւններից. օրինակի համար՝ իրաւունքի փիլիսոփայութիւն, կրօնի փիլիսոփայութիւն, բնափիլիսոփայութիւն, մորալ փիլիսոփայութիւն, իմացաբանութիւն և այլն, ինչպէս և գիտութիւններից։ Զուտ փիլիսոփայութիւնը ներկայացնում է դրանց սինթեզը—համադրութիւնը։ Զուտ փիլիսոփայութեան առարկան է կազմում իրականութիւնը իր ամբողջութեան մէջ, այն ինչ՝ ամեն մի գիտութեան նիւթն է կազմում այդ նոյն իրականութեան մի բաղկացուցիչ մասը։ Նա բնորոշեց փիլիսոփայութիւնը իբրև պարունակութիւն բովանդակ գիտական իմացութեան։ Նա վերջացրեց դասախօսութիւնը եզրափակելով հետևեալ խօսքերով. «Մեծ և իսկական փիլիսոփան նա է, որը օրգան ունի իրերի ամբողջութեան համար, նա, որի դիտողութիւնը և հայեացքն ուղղված է իրականութեան վրա իր ամբողջութեան մէջ. նա, որի հոգին տեղ ունի ընդհանուրի համար, նա, որ ընդունակ է ժամանակին, պատահականը չը տեսնել, նա, մի խօսքով, որի հոգին ընդգրկում է համաշխարհայինը, տիեզերականը»։ Այսօրվայ բազմութիւնը կարելի է համարել արտակարգ, մօտաւորապէս 200 հոգի։ Շատերը զարմանք էին յայտնում, թէ ինչպէս այդպիսի գիտական-փիլիսոփայական նիւթը աւելի քան մատչելի էր դարձած։ Յոյս ունենք, որ միւս դասախօսութիւններին աւելի մեծ և ստուար բազմութիւն կը գայ լսելու հետաքրքրական և անմիջական նիւթի շարունակութիւնը։ Ցանկալի էր, որ առհասարակ մեծ բազմութիւն լինեն, որովհետև այդտեղ բոլորն էլ մի նոր և սովորելու բան են գտնում, մանաւանդ մտքերը լայնանում են, աւելի հեռուն և իրերի խորը թափանցում. մանաւանդ փիլիսոփայութիւնը, որ առաջին տեղն է բռնում իր հետաքրքրութեամբ։ Եկող հասարակութիւնը կազմում էր ընտիր դասակարգը, որը և հեռացաւ շատ գոհ, որովհետև դասախօսը խօսում էր մատչելի լեզուով և այդ դասախօսութեան կարճ ընթացքում աւելի բան, քան թէ կարելի էր սպասել: Գ. Աղաղաղեան

ՌՈՒՍԱՑ «ԳՐԱԿԱՆ ՖՕՆԴԻ» ՅՕԲԵԼԵԱՆԸ

(1859—1909)

Ռուս կարօտ գրողներին և գիտնականներին նիւթապէս և բարոյապէս նպաստող հիմնարկութիւնը, «Գրական ֆօնդը», հիմնվել է 1859 թւին, շնորհիւ ժամանակիվայ յայտնի գրականագէտ Ա. Դրուժինինի նախաձեռնութեան:

Ա. Դրուժինինը, որ մեծ ծառայութիւն է մատուցել ռուս գրականութեանը, ծանօթացնելով ռուսներին անգլիական կեանքի և գրականութեան հետ, սիրահար էր ամեն անգլիականի և նա Լօնդօնի գրողների ֆօնդի նման մի բան ստեղծել ուզեց ռուս գրողների համար ևս: Այդ միտքը արձագանք գտաւ ժամանակակից յայտնի գրողների ու գիտնականների շրջանում: Մշակվեց «Գրական ֆօնդի» կանօնադրութիւնը, որ բիւրօկրատական կարգերի մէջ անսովոր արագութեամբ հաստատվեց իշխանութեան կողմից, մի կարևոր լրացումով սակայն, այն է, որ ֆօնդը պիտի գտնվէր ժողովրդ. լուսաւորութեան մինիստրութեան հովանու և հսկողութեան տակ: Հիմնադրողները առաջին ընդհանուր ժողովին հաւաքվեցին 1859 թւի նոյեմբերի 8-ին. ահա ինչու և այս նոյեմբերի 8-ին տօնվեց «Գրական ֆօնդի» յօբելեանը:

«Գրական ֆօնդի» հիմնադրողները, թւով 35 հոգի, ինչպէս ասացինք, յայտնի գրողներ և գիտնականներ էին: Հանրածանօթ անուններից յիշենք նրանց, որոնք և յետագայում խոշոր ծառայութիւններ են մատուցել ընկերութեանը: Դրանք են՝ նախաձեռնող Ա. Դրուժինինը, յայտնի կրիտիկոս-մէմուարիստ Պ. Աննենկովը, գիտնական-հրապարակախօս Կ. Կավելինը, «С.-Петерб. Вѣд.»-ի երեւելի խմբագիր Վ. Կորշը, Ն. Ն. Նեկրասովը, Ա. Օստրովսկին, Ա. Պլէշինը, Սալտիկով-Շչեդրինը, «Вѣст. Евр.»-ի խմբագիր Մ. Ստասիւլեվիչը, Իվան Տուրգենևը, Նիկոլայ Չերնըշեվսկին: Դրանցից յօբելեանը տեսնելու արժանացաւ, որքան մենք գիտենք, ալեզարդ 84-ամեայ Մ. Ստասիւլեվիչը և գուցէ մի երկուսը (Վ. Լամանսկիյ և Ն. Օբրուչեվ), որոնց մասին այս րոպէիս մեր ձեռքի տակ չունենք լրիւ տեղեկութիւններ:

Ընկերութիւնը իր գործունէութիւնը սկսեց մի շատ համեստ գումարով. միայն 3000-ական րուբլով: Եւ դա չնչին գումար չէր սկզբի համար, եթէ ի նկատի ունենանք այն ժամանակիվայ ռուս գրագէտների նիւթական վիճակը: Արդարև չը կար դեռ ևս լայնածաւալ գրականութիւն, օրագրութիւնը բաղկացած էր երկու-երեք արտօնված թերթերով («С.-Петерб. Вѣд.», «Московскія Вѣдомости», և «Сѣверная Пчела»): Իրանց գրողները մեծամասնութեամբ պատկանում էին կամ արտօնված դասակարգին— կալուածատէրեր և խոշոր պաշտօնեաներ— կամ բոլորովին ապահովված էին իրանց գրական աշխատանքով (Օստրովսկի, Նեկրասով, Չերնըշեվսկիյ և այլն): Յայտնի է, որ ռուս գրականութիւնը, օրագրութիւնը աճել սկսեց մեծ թափով «րէֆօրմների շրջանում», առաւել՝ գիւղացիական մեծ րէֆօրմը պսակվելուց յետոյ: Ասպարէզ եկաւ ստորին դասից գրողը, սեմինարիստը, չինովնիկի որդին, մեշչանինը, որոնք յայտնի են разночинъ հաւաքական անուան տակ: Նա ասպարէզ եկաւ իր ջերմ ժողովրդական և ժողովրդասիրական իղձերով, բայց և նիւթական անապահովութեամբ, հետևանք իր սօցիալական դրութեան:

Ընկերութիւնը հէնց սկզբից արագ քայլերով բարգաւաճել սկսեց շնորհիւ— և դա մենք հարկ ենք համարում ընդգծել— իրանց մասնակիցների, գրողների ջանքերին, առանց կողմնակի մեկենաս-բարերարների օգնութեան: Ֆօնդի գլխաւոր հասոյթները կազմել և կազմում են անդամակցական վճարները, որոնց մասնակցել կարող են և ոչ գրողները, թէև դրանց մասնակցութիւնը միշտ չնչին է եղել, պարբերաբար սարքվող գրական երեկոյթները, ներկայացումները, որոնք այնքան սիրված են Պետերբուրգի հասարակութիւնից, ապա դասախօսութիւններից և այլն: Մի քանի հրատարակութիւններ մտցրել են և մտցնում են տարեկան կանօնաւոր վճարներ (ներկայումս «Рус. Вѣд.» 300-ական րուբլի): Ֆօնդին խոշոր գումարներ են նուիրաբերել իրանք գրողները: Օրինակ Գ. Ելիսէևը 40,000 ր., Միխնևիչը մօտ 120,000, Պավլենկովը՝ 30,000, Բունակովը 24,000, Պլեշչէևը 30,000 և այլն: Դրանց հարստութեան աղբիւրը եղել է միակ ռուս գրականութիւնը և նրա ծառայողներին են վերադարձրել իրանց վաստակները: Այս դրամական նուիրաբերութեանց վերջերումս միացաւ և մի քանի հանգուցեալ գրողների հեղինակութիւնների հրատարակութեանց սեփականութիւնը, որ նուիրաբերեցին նրանց ժառանգները: Այժմ ֆօնդի սեփականութիւնն են՝ յայտնի պատմաբան Կօստոմարովի բազմահատոր աշխատութիւնները, Նադսօնի «Բանաստեղծութիւնները», Գր. Ջանշեանի «Մեծ րէֆօրմների շրջանը», որ լոյս է տեսնում 9-րդ հրատարակութեամբ, Վ. Գարշինի, Բելօգօլօվու գրուածքները և այլն: Թէ որքան արդիւնաւէտ է ֆօնդի հրատարակչական գործունէութիւնը, դրան օրինակ Նադսօնի մի հատոր «Բանաստեղծութիւնները», որ 12 տարվայ ընթացքում զուտ արդիւնք է տուել... 120,000 րուբլի:

Ներկայումս «Գրական ֆօնդը» ունի մօտ 720,000 ր. դրամագլուխ և մի հոյակապ սեփական շէնք, որտեղ չնչին վարձով ապաստանվում են կարօտ գրողները: Այդ տունը կառուցել է և ֆօնդին նուիրաբերել մի մասնաւոր անձն, իսկ նրա ծախսերը հոգացվում են գրող Միխնևիչի դրամագլխի տոկոսներից:

Մի գաղափար կազմելու համար ֆօնդի գործունէութեան մասին, բերում ենք այստեղ վերջին հրատարակած հաշւի մի քանի թւերը*): Ծախս 1907 թւի.—գրողներին կենսաթոշակ՝ 6817 ր., երկարատև նպաստ՝ 9785 ր., միանուագ նպաստ, չը վերադարձնելու պայմանով 8920 ր., փոխառութիւններ՝ 3650 ր., գրողների որդիներին կրթութեան համար՝ 2390 ր., թոշակաւոր ուսանողներին՝ 3700 ր.: Բացի դրանից «Գրական ֆօնդի» միջնորդութեամբ մի քանի ուսումնարաններում կարօտ գրողների ու գիտնականների որդոց համար բացված են ստիպենդիաներ՝ թւով 33:

Բացի այս նիւթական նպաստից «Գրական ֆօնդը» և բարոյական օգնութիւն է հասցնում ռուս գրողներին. միջնորդում է հրատարակիչների և գրողների տարաձայնութեանց վերջ տալու համար, խնդրատարոյց է լինում կառավարութեան առաջ և այլն: Բայց չը նայած «Գրական ֆօնդի» խոշոր սեփականութեան, դարձեալ բազմաթիւ գրողներ, որոնց կարիքները ստուգված են եղել հէնց ֆօնդի կողմից, մնում են առանց օգնութեան: «Գրական ֆօնդի» հասոյթները չեն բաւում բաւարարութիւն տալու բոլոր խնդիրքներին: Կողմնակի վճարներից միայն աչքի ընկնողը կազմում է Թագաւորական տան տարեկան 1450 ր. նուէրը:

Բացի «Գրական ֆօնդի» օգնութիւնից, ռուս չունևոր գրողները նպաստ են ստանում գիտութեանց ճեմարանին կից «Պուշկինեան ֆօնդից», որ հիմնադրվել է Ս. Ի. Վիտտէի զեկուցումով 1899 թւին, Պուշկինի ծննդեան հարիւրամեակին: Այդ ֆօնդը պետական գանձարանից տարեկան ստանում է 40,000 ր.:

Գրողները ունեն և «ինքնօգնութեան կասսա», որ մի պարզ ապահովագրութեան դրամարկղ է. մասնակցողներն իրանց պարբերաբար վճարներով ապահովում են իրանց կամ իրանց ընտանիքի թոշակը:

Շուտով կունենայ հայ գրողը իր մասին հոգացող «հայ գրական ֆօնդը»:

Անտանելլի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Էջմիածնից մեզ հաղորդում են, որ գործերը կամաց-կամաց կարգի են ընկնում: Դիւանատունը և կազմված յանձնաժողովները կանօնաւորապէս գործում են: Կաթողիկոսը մեծ ուշադրութեամբ քննում և ուսումնասիրում է գործերը, հսկում է, որ առկախ մնացած խնդիրները ընթացք ստանան: Այսպէս օրինակ, Աստրախանի թեմական դպրոցի բացման առկախ գործին արդէն ընթացք է տրված և շուտով հարկաւոր դիմումը կը կատարվի:

◆ Այս օրերս մի երկու դասախօսութիւն կը կարդայ Բագրատ Խալաթեան Բագարանում ամառը կատարած իր պեղումների հետևանքների մասին:

◆ Ինչպէս յայտնի է ընթերցողներին, դեռ անցեալ տարիներից խօսք կար, թէ Թիֆլիսի արուարձաններից մեկում, Նաւթիս-Ճալա կոչված տեղում, երևացել են նաւթի հետքեր: Կամենալով փորձել այդ լուրերը, Բագուի նաւթարդիւնաբերող Գ. Յ. Տէր-Մարգարեանը քաղ. վարչութեան հետ պայման կապելով և իբրև գրաւական 3000 ր. տալով յիշեալ տեղում դրեց մեքենաներ նաւթ քաշելու համար: Սակայն այժմ պարզվեց, որ տիրող կարծիքը նաւթ լինելու մասին բոլորովին անհիմն է: Տէր-Մարգարեան փորեց 60 ս. գետին և փոխանակ նաւթի երևաց ժայռի կտոր: Այնպէս որ ներկայումս աշխատանքները դադարեցված են, իսկ Գ. Տէր-Մարգարեան հրաժարվել է իր տուած 3000 րուբլուց:

◆ Նոյեմբերի 16-ին Թիֆլիսի Արտիստական Ընկ. թատրոնում կը տրվի մի ներկայացում յօգուտ Անդրկովկասի Որբախնամ Ընկերութեան:

◆ Այսօր Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան ընդհանուր ժողովներում հանդէս դրված կը լինեն մի քանի տնայնագործական գործուածքներ, որոնք պատրաստվել են Արագածի շուրջ գտնվող գիւղերում և Մանթաշապատ գիւղում: Բացի այդ Բէյզման կը հաղորդէ տեղեկութիւններ գիւղատնտեսական գործիչների մասին:

◆ «Մշակի» երեկվայ համարում Ախալքալաքի հայոց եկ.-ծխական հոգաբարձութեան նամակ խմբագրութեանը անկարող եղանք իր ժամանակին լոյս ընծայել: Ինչպէս տեղեկացանք, Թիֆլիսի թեմի առաջնորդի կարգադրութեամբ ահա երկու շաբաթ է, որ Թիֆլիսից Ախալքալաք է գնացել կոնսիստորիայի նախանդամ Եփրեմ վարդ. Սուքիասեանը հին և նոր հոգաբարձութիւնների միջև ծագած տարաձայնութիւնները քննելու համար:

◆ Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնակատար Յովսէփ Խունունց հարց է բարձրացնելու դպրոցի հոգաբարձութեան նիստերում՝ շինել նորակառոյց շէնքին կից աշակերտական հանրակացարաններ գաւառից եկած և Թիֆլիսի ամենաաղքատ աշակերտների համար:

◆ Էջմիածնից մեզ հաղորդում են. «Մեսրոպ վարդապետի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը բացատրվում է նրանով, որ պօլօժենիայի հիման վրա սինօդի 8 անդամներից գոնէ 4-ը եպիսկոպոս պէտք է լինեն:

◆ Թիֆլիսի Արքունական թատրօնի օպերային երգիչ Ղուկասեան այս քանի օրը բեմ չէ դուրս գալիս կոկորդը մրսեցնելու պատճառով: Նա հանդէս կը գայ հաւանօրէն վաղը:

◆ Թիֆլիսի Արքունական թատրօնի օպերային խումբը, Էյխենվալդի ղեկավարութեամբ, փութկոտութեամբ կրկնում է «Ներօն» յայտնի օպերան, որ մտադրվում է տալ այս շաբաթ:

◆ Նոյեմբերի 10-ին Երևանեան հրապարակի վրա քաղաքային վարչութեան և տեխնիքական մասնաժողովի ներկայացուցիչները քննեցին Թիֆլիսի էլեքտրաքարշի արհեստանոցում պատրաստված վագօնը, որ արտասահմանում պատրաստուածից բոլորովին չէր զանազանվում: Բացատրութիւններ տալիս էր էլեքտրաքարշի նոր վերատեսուչ Բատալը: Քննութեանը ներկայ էր նաև նահանգապետի օգնական Ջերնեավսկին: Վագօնները այստեղ պատրաստելով, ընկերութիւնը շահում է կէս մասը այն ծախքերի, որ լինում էր արտասահմանից բերել տալու ժամանակ:

◆ Նոյեմբերի 15-ին վրաց ազնուականների թատրօնում վրաց դրամատիքական խումբը կը ներկայացնէ նոր պիէս, որի նիւթը վերցված է ազատագրական շարժման ժամանակներից: Պիէսը պատկանում է Գ. Գօտուայի գրչին և կրում է «Կուսակցական են, արդեօք, մարդիկ» խորագիրը:

◆ Նոյեմբերի 10-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Ալէքսանդրօպօլի գաւառի բնակիչ Մկրտիչ Հայրապետեանը, որ ապրում է Արսենալնայա փողոցում, Բարսկու տանը, անցնում էր Բատարէյնայա փողոցով՝ հաւ ու ճուտ ծախելով: № 18 տան մօտ նրան մօտեցաւ մի անյայտ մարդ և ապտակեց Հայրապետեանին. վերջինս բռնելով նրա ձեռքից, սկսեց ոստիկան կանչել: Այդ ժամանակ անյայտ մարդը վերարկուի տակից հանեց «մաուզեր» ատրճանակը և կրակեց մի անգամ Հայրապետեանի վրա, բայց գնդակը վրիպեց, որից յետոյ սկսեց փախչել Բատարէյնայա փողոցով դէպի վեր, իսկ յետոյ շրջեց Գօգօլէվսկայա փողոցը, դիմեց Ցէյխերվերկսկայա փողոցը և ուզում էր անցնել Նախալովկա: Կամուրջի մօտերը կանգնած քաղաքապահ ոստիկանները, տեսնելով դէպի իրանց վազող մարդուն, թոյլ չը տալով նրան մօտենալ իրանց, 20 քայլ հեռաւորութեամբ, նրանցից մէկը աղաղակեց՝ «կանգնի՛ր» և հրացանը պատրաստ բռնեց ձեռքում. այդ ժամանակ չարագործը դուրս քաշեց ատրճանակը և կրակեց մի քանի անգամ, անօգուտ, ոստիկանի վրա, որից յետոյ նա շուռ եկաւ և դիմեց դէպի Մօլօկանսկայա փողոցը, ուր հանեց ուրիշ «մաուզեր» ատրճանակ, սկսեց կրակել իրան հետապնդող ոստիկանների և 3-րդ հրացանաձիգ գնդի զինւորների վրա: № 22 տան մօտ, Մօլօկանսկայա փողոցում, չարագործը մի ոստիկանի արձակած գնդակից սպանվեց տեղնուտեղը: Չարագործին հետապնդելու ժամանակ վիրաւորվեցին աւագ ունտեր-օֆիցէր Վօրօբիեվ, զինւոր Լէմնիկով, զինւոր Դեմեանով, ժանդարմական ունտեր-օֆիցէր Իվան Սվիստունով և իր խանութում կանգնած՝ սափրիչ Վ. Լոմսաձէ: Սպանված չարագործի մօտ գտնվեցին 2 ատրճանակ, 2 փամփուշտակալ 10 փամփուշտներով: Դեռ յանցաւորի ով լինելը պարզված չէ. Նրա դիակը տարվեց Միքայէլեան հիւանդանոցը:

◆ Նոյեմբերի 9-ին, երեկոյեան ժամը 11-ին, VII քաղաքամասի ոստիկանութիւնը, զինւոր-պահակների օգնութեամբ, շուրջկալ կատարելով ձերբակալեց 50 անգործ և անանցաթուղթ մարդկանց:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Россія» լրագիրը հաղորդում է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը զբաղված է մի նախագծով այն պայմանների մասին, որոնցով բարձրագոյն դպրոցներն աւարտած կանանց կարելի լինէր՝ տղամարդկանց հետ հաւասար պրօֆեսիօնալ և մասամբ պաշտօնական իրաւունքներ տալ: Մտադրութիւն կայ իրաւունք տալ զանազան քաղաքներում, նայելով պահանջներին և հնարաւորութեանը, հիմնել առանձին քննիչ յանձնաժողովներ գիտական բարձր աստիճան ունեցող անձերից: Քննութիւններին ենթարկվելու համար կանայք պարտաւոր են ներկայացնել կամ վկայականներ արական գիմնազիաների դասընթացքը գիտենալու մասին, կամ վկայականներ լրացուցիչ քննութիւններ բռնելու մասին, որպէս այդ սահմանված է այժմ, օրինակ, բժշկական կուրսերի համար, նոյնպէս և բարձրագոյն դըպրոցի վկայական, ուր ունկնդրուհին անցել է գիտութիւնների այս կամ այն դասընթացքը: Քննութիւն բռնողները կը ստանան առաջին և երկրորդ կարգի դիպլօմներ կամ բժշկի դիպլօմ, եթէ նրանք քննութիւն կը բռնեն բժշկական յանձնաժողովի առաջ նոյն քննիչ յանձնաժողովներում: Արդէն վերոյիշեալ դիպլօմն ստացած կանայք կարող են առանձին քննութիւն բռնել գիմնազիաների ուսուցչուհու կոչում ստանալու համար, որով, հետևաբար, կանանց առաջ բացվում է լայն ասպարէզ ուսումնարանական ծառայութեան մէջ տղամարդկանց հետ համահաւասար իրաւունքներով: Դիպլօմներ ստանալով, կանայք կարող են ձեռք բերել համալսարանների խորհուրդներից մագիստրի և դօկտօրի գիտական աստիճաններ, որով, հետևաբար, կանանց իրաւունքները հաւասարվում են տղամարդկանց հետ գիտական և ուսումնական գործունէութեան մէջ:

ՄԱՄՈՒԼ

Ամերիկայի Բոստօն քաղաքում հոկտեմբերի 15-ից սկսել է հրատարակվել «Հայ» անունով մի ամսաթերթ, որի առաջին համարը ստացանք այս օրերս: Նոր թերթը իր նպատակը դրել է. «Լինել յիշատակարան մը, ուր պիտի արձանագրուին հայ ընկերութեան մէջ ծնունդ առնող բարեգործական շարժումները, և մասնաւորապէս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործունէութիւնը: Լուսաւորեալ ազգերու համար բարեգործութիւնը ամենավսեմ իդէալ մըն է, որուն ծառայող իւրաքանչիւր կազմակերպութիւն իր գործօն առաքելութեան հետ՝ ունի նաև իր գաղափարաբանական օրգանը: Մեր ազգին համար՝ բարեգործութիւնը անմիջական ու աննահանջելի պարտք մըն ալ է և ոչ նուազ պէտք ունի այդ տեսակ ոյժերու»:

Մեր նոր պաշտօնակցին աջողութիւն ենք ցանկանում իր ընդգրկած ասպարէզում:

*

Իզմիրի «Դաշինք» թերթը առաջ բերելով «Մշակի» այն կարծիքը, թէ հայերի մէջ ներկայումս դժուար է կազմել Alliance Israélite-ի պէս մի համազգային միութիւն, գրում է. «Մենք «Մշակի» այս յոռի տեսութիւնը անտեղի կը գտնենք: Հայկական Միութիւնը կազմուելիք մարմին մը չէ: Անիկա տարիներէ ի վեր գոյութիւն ունի արդէն «Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անունին տակ և յաջողութեան ամեն պայման կը լրացնէ: Կը բաւէ միայն ոյժ տալ անոր ազգովին»:

Անշուշտ Եգիպտոսի «Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անունով կազմակերպութիւնը, որի գործունէութիւնը համակրելի և մեր կողմից արժանի է ամեն տեսակ խրախուսանքի և աջակցութեան, կարող էր այդ դերը կատարել, բայց դրա համար պէտք է որ զանազան պետութիւնների մէջ ապրող հայերը անդամակցեն այդ միութեանը, որ չունի ամենևին քաղաքական նպատակ: Մեր կարծիքով, այդ կարելի էր աջողեցնել՝ գումարելով Եգիպտոսում կամ Եւրոպայի մի այլ կենտրոնում մի համագումար՝ զանազան երկրների հայ ազգաբնակութեան ներկայացուցիչներից, և այս հանգամանքը յանձնարարում ենք Միութեան վարչութեան ուշադրութեանը:

*

Ստացանք «Անահիտ» հանդէսի օգոստոս-սեպտեմբերի միացեալ համարը, որի մէջ տպված է Շիրվանզադէի «Կործանվածը» վերնագրով մի նոր պիէսի շարունակութիւնը, դերասանուհի տ. Հրաչեայի «Իմ յիշողութիւններս» վերնագրով թատրօնական յիշողութիւնները և Շէկսպիրի «Անտօնիոս և Կլէօպատրա» դրաման, թարգմանութիւն Փանոսեանի:

Բացի այդ թատրօնական գրուածքներից կայ և Արշակ Չօպանեանի «Առաքելութիւնը» վերնագրով մի առաջնորդող յօդուածը, որի մէջ հեղինակը խօսում է Դուրեան պատրիարքի հրաժարականի հակակղերական և հակահասարակական պայքարի և անժամանակ ու սխալ հասկացված ընկերվարութեան մասին: Ինչպէս և պէտք էր սպասել ամեն մի անձից, որ ի մօտոյ ծանօթ է Թիւրքիայի հայութեան գործերին, Չօպանեան միանգամայն արդարացնում է Դուրեան պատրիարքի գործելակերպը, ասելով. «Այսօր, հայ մըն է դարձեալ Դուրեան պատրիարքը, որ կը լրացնէ ինչ որ Գապիկեան սկսած էր. բարոյական պատիժէն յետոյ՝ կը պահանջէ իսկական պատուհասումը չարագործներուն. իր պատճառաբանուած ու ամուր հրաժարականը՝ մեծ պարտք մըն է, արարք մը, որով անգամ մը ևս հայութիւնը՝ այդ պետին ձեռքով արդարութեան ճամբան մատնանիշ կընէ օսմանեան պետութեան ճակատագիրը նիւթապէս վարողներուն»:

Այդ յօդուածի միւս կէտերի մասին յաջորդ անգամ:

*

Նոյեմբերի 8-ից Թիֆլիսում սկսեց հրատարակվել «Нашъ Край» անունով ռուսերէն մի նոր թերթ, որ իր նպատակը այսպէս է բացատրում.

«Մեր լրագրի նպատակն է՝ ծառայել մեր երկրին, բնակված բազմազան ազգութիւններով: Մեզանից ամեն մէկը, լինելով զաւակ իր ազգի, բնականաբար, ապրում է բոլոր այն զգացումներով, որոնցով յուզվում, տանջվում և ուրախանում է մայրենի ժողովուրդը. բայց մենք չենք կարող և չը պէտք է մոռանանք և ոչ մի րոպէ, որ ճանապարհը դէպի լաւագոյն կեանքը ընթանում է համերաշխ գործելով և հաղորդակցելով բոլոր ազգութիւնների հետ, որոնց հետ, պատմական ճակատագրի կամքով, մենք ապրում ենք: Միայն ընդհանուր ոյժերով և ընդհանուր միջոցներով մեր երկրի բոլոր ազգութիւնների ժողովրդական մասսաները կարող են շարժվել դէպի հեռաւոր պայծառ իդէալը»:

Ի սրտէ աջողութիւն ենք ցանկանում նոր թերթին, իր ծրագրած ուղղութեան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 11 նոյեմբերի

Սրանով պատիւ ունեմ յայտնելու իմ խորին շնորհակալութիւնը այն բոլոր անձանց, որոնք հեռագիրներով և նամակներով շնորհաւորեցին ինձ եպիսկոպոս ձեռնադրվելուս առիթով: Օրհնում եմ ամենքին և բարեմաղթում երջանիկ և արդիւնաւէտ կեանք: Մխիթար եպիսկոպոս

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԼԱՒՕՆԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՕՆՖԼԻԿՏԸ ԱՒՍՏՐԻԱՅՈՒՄ

Աւստրիայում տեղի ունեցող քաղաքական ճգնաժամի էութիւնը գեղեցիկ կերպով բացատրում է Պրագայի «Union» լրագիրը իր առաջնորդող յօդուածում:

«Աւստրիայի այժմեան ներքին դրութիւնը,— ասում է այդ լրագիրը,— ստիպում է քաղաքականապէս մտածող իւրաքանչիւր հասարակական գործիչին երկու հարցերի վրա կանգ առնել:

«Ինչու Աւստրիայում պարլամենտարիզմը կենսունակ չէ:

«Ինչու սլաւօնները, մանաւանդ չէխերը խորին կերպով վիրաւորված են զգում իրանց այդպէս անուանված գերմանական դպրոցական օրէնքների հրատարակումից և մինչև անգամ կարծում են, որ իրանց ազգային իրաւունքներին լուրջ վտանգ է սպառնում:

«Եւ իւրաքանչիւր անկողմնապահ մարդ հեշտ կը գտնէ պատասխան այդ հարցերին:

«Պարլամենտարիզմը Աւստրիայում այն պատճառով կենսունակ չէ, որ աւստրիական կառավարութիւնը, հակառակ իւրաքանչիւր պարլամենտարիզմի հիմնական սկզբունքի, կատարում է այն, ինչ ցանկալի է փոքրամասնութեանը:

«Եւ քանի դեռ, հետևաբար, աւստրիական իշխանութիւնները գերմանական փոքրամասնութեան հլու հպատակ կը լինեն, աւստրիական պարլամենտարիզմի կենսունակութիւնը միշտ կասկածի տակ կը լինի:

«Եւ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Աւստրիայի ոչ-գերմանական ազգերը չեն կարող վստահութեամբ վերաբերվել այդպիսի կառավարութեանը:

«Գերմանական կիսապաշտօնական օրգանները հաւատացնում են, որ այդպէս անուանված գերմանական դպրոցական օրէնքները չեն ուղղված չէխերի դէմ:

«Այդպիսի պնդումը միայն ծաղր կարելի է համարել չէխերի և առհասարակ սլաւօնների դէմ, որովհետև իւրաքանչիւր անկողմնապահ մարդու համար կատարելապէս ակներև են այդ օրէնքների նպատակն և նշանակութիւնը: Նրանց նպատակն է զրկել հազարաւոր չէխ մանուկներին նրանց բնական և պետութեան հիմնական օրէնքներով ապահովված իրաւունքից՝ սկզբնական կրթութիւն ստանալ իրանց մայրենի լեզուով»...

Պրագայի լրագիրը հետևեալ կերպով է վերջացնում իր յօդուածը.

«Գերմանացին Աւստրիայում ուզում է տիրապետել. նա ուզում է «տէր» լինել այդ երկրում. իսկ մնացած ժողովուրդները պարտաւոր են միշտ այսպէս «ստրուկներ» մնալ: Աւստրիական կառավարութիւնը, երևի, կամք կամ ոյժ չունի «տէրերի» ցանկութիւններին դիմադրելու համար»:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նոյեմբերի կէսերին պօստահեռագրական գլխաւոր վարչութեանը կից կը սկսվեն այն յատուկ մասնաժողովի նիստերը, որ կազմված է փոխադրական տարիֆը պակասեցնելու հարցը քննելու համար:

Սենատը բացատրեց, որ Թալմուտի և Թօրայի կանդիդատների և աւագների ընտրութեան կարգը կախված է հրէական սինագօգի ծխականներից:

Օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացան 3, մեռաւ 1 հոգի:

Բացվեց արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների չորրորդ համագումարը: Եկել են 400 հոգի: Համագումարի նախագահ ընտրվեց Կրեստօվնիկօվը: Համագումարը ողջունեցին ֆինանսների մինիստրը, առևտրի մինիստրի օգնականը, հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի օգնականը: Հեռագիր էր ուղարկել ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Ռուխլովը. համագումարի աշխատանքները կը տևեն չորս օր:

Կարմիր Խաչի գլխաւոր վարչութիւնը

---

*) «Մշակի» խմբագրութիւնը իր պարտքն է համարում շնորհակալութիւն յայտնելու «Գրական ֆօնդի» յարգելի կօմիտէին, որը ուղարկել էր հայկական գրական ֆօնդի կանօնադրութիւնը մշակող յանձնաժողովին մեր լրագրի միջոցով զանազան նիւթեր:

Պետերբուրգի և նրա շրջակայքի խոլերայի դէմ մաքառելու համար յունվարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը ծախսել է. 168,759 րուբլի։

Նահանգական գաւառներին կից կայացաւ Վարգունիննների Թղթի Ֆաբրիկայի աճուրդը։ Ամենաբարձր գինը տուեց Բեռլինի «Մորից և Գերց» Ֆիրման—1,600,000 րուբլի։

Քաղաքային լոմբարդի գանձապահուհու վրա յարձակվողը քաղաքապետի կարգադրութեամբ յանձնվում է զինուորա-դատական դատարանին։

ՄՈՍԿՎԱ։ Բլէրիօյի Թռիչքը չը կայացաւ։ Օդագնաց Գիւյօն կոտրեց օդապարիկի Թևը և պտուտակը և ոչ մի կերպ չը կարողացաւ բարձրանալ։ Տան-հազարաւոր հասարակութեանը փողերը վերադարձրին։

Տրեխգօրնիի գարեջրանոցի դրամատարից յափշտակեցին 10,000 րուբլի։ Յարձակվողներից մէկը բռնվեց։

ՏԱՇԿԵՆՏ։ Նահանգապետի կարգադրութեամբ գործող մասնաժողովը որոշեց աշխատանքներ կազմակերպել Թիւրքեստանի գիտական-ստատիստիկական բազմակողմանի քննութեան համար։

ՄՈՍԿՎԱ։ Կրկին խօլերայով հիւանդացաւ մինը։

ԿԻԵՎ։ Ջիւնախառն փոթորիկների պատճառով հաղորդակցութիւնը շատ դժուարացել է։

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ։ Պեատիգրիանի ստանիցայում գտնվեցին նախապատմական կենդանիների ահագին կմախքներ։

ԽԱՐԲԻՆ։ Սահմանային Նահանգական դատարանը արդարացրեց 129-րդ յօդուածով «Խարբին» և «Պօլիտիկա» լրագիրների խմբագիրներին։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Հաստատվեց Բայտի ակցիօներական ընկերակցութիւնը մի միլիօն դոլլար դրամագլխով։ Հիմնադիրների Թւում են Կօռնէլին, Վանդէրբիլտ, Աւգուստ Բէլմօնտ և ուրիշ խոշոր դրամատէրեր. ընկերութեան վարչութեան նախագահն է Բայտի եղբայրներից մինը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ

Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 Թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Ց. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ.; վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ց. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ներքին և ջղային հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը

ամեն օր	առաւօտեան 9—12 ժ.
	երեկոյեան 5—7 ժ.

Միքայէլեան փողոց, № 27.

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը

ամեն օր	առաւօտեան ժ. 12½—2.
	երեկոյեան ժ. 5—7.

Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.

Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԻՒՐԳԻՒԼԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր

Առաւօտեան ժամը 10—1

Երեկոյեան ժամը 5—7

Վելյամինօվսկայա փող № 8

(օ. մ.) 783. 100—45

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Ընդունում է հիւանդներին՝

Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։

Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։

Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.

Տելեֆօն № 40.

(ե. ու. կ.) 984. 100—21

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։

Կոէնիեվսկայա փ., № 6, «Վէտցել» հիւրանոցի մօտ։ (ե. հ. շ.) 955. 100—23

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԵԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ

Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втирание) նայլն։ Ելեկտրականութիւն ընէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Կարելի է և գրաւոր, ներփակելով վարձատրութիւն ըստ կարողութեան։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ։

(օ. մ.) 857. 0—27

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ և ծախվում է

Ալէքսանդր Մամիկոնեանի

ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Բանաստեղծութիւններ

Գինը 20 կոպ.։ Կարելի է գնել Թիֆլիսում «Փարոս», «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցներում։

Գումարով գնողներին 25% զեղչ։

Պահեստը՝ Тифлисъ, Никол. мостъ. Н. Теръ-Гевондянъ.

(շ. ե.) 1218. 5—1

Լոյս տեսաւ

Մ. ՋՄՇԿԵԱՆԻ

1910 Թ. „ԾՈՑԻ" ՕՐԱՑՈՅՑԸ

յայտնի հետաքրքրական զուշակութիւններով։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Ջմշկեան։

(հ.) 1086. 12—9

ԿՈՉ

Հոկտեմբերի լոյս 18-ի գիշերը Թիֆլիսի նահանգի Սուրամ աւանում հրդեհից այրվեց ամբողջ հրէական Թաղը և հայոց Թաղի մի մասը։ Այրվեցին 120 տներ և աւելի քան 130 ընտանիքներ մնացին առանց ապաստանի, հագուստի և կերակրի, որովհետև ամբողջ գոյքը կրակի ճարակ դարձաւ։ Նոյնպէս այրվեցին 3 աղօթատներ և հրէաների 2 դպրոց։ Ուտելու հաց չը կայ, չը կայ տեղ Աստուծուն աղօթելու համար, չը կայ տեղ մանուկներին սովորելու համար։ Բարի մարդիկ, հրկիզեալների անունից դիմում ենք ձեր գթասրտութեանը՝ խնդրելով որ անսաք հրկիզեալների վշտին ու յուսահատութեանը և ձեր կարողութեան չափ տուած լումայով թեթևացնէք թշուառների տանջանքը, յիշելով որ իւրաքանչիւր տուրք բարի է։ Նուէրներն ուղարկել Թիֆլիսի նահանգի Սուրամ աւանը ի նպաստ հրկիզեալների նուիրատւութիւններ ժողովող կօմիտէտին. (Комитетъ по сбору пожертвованій въ пользу погорѣльцевъ, въ Сурамѣ).

(հ. ու. շ.) 3—1

ՀՐԱՒԷՐ

Մողնու եկեղեցու ծխականները հրաւիրվում են երկրորդ ժողովի, կիրակի, նոյեմբերի 15-ին, ցեր. ժամը 12-ին, դպրոցին և եկեղեցուն վերաբերեալ կարևոր խնդիրների մասին խորհրդածելու։ Ժողովի որոշումները վերջնական կը լինեն։

Ի կողմանէ ծխ. հոգաբարձութեան՝

Նիկ. Տէր-Ղևոնդեան

(հ. շ.) 1219. 2—1

ՀԱԶԻՒԱԳԻՒՏ ԴԷՊՔ!

7 r. 25 կ. ձմեռային երկու զգեստ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ «ՏՐԻԿՕ»—բրդէ ամուր և մօդային կտոր, 2 արշ. լայն., 4¼ արշ. երկար., տղամարդկ. զգեստի համար, և 8 արշ. տրիկօ «ՊԱՆԱՄԱ» - կանանց ամուր և էլեգանտ զգեստի համար։ Հանդերձ պօստային ճանապարհածախքով։ Առանց կանխավճարի և ռիսկի։ Չը հաւանած դէպքում ֆաբրիկան փողը լրիւ վերադարձնում է։ Հասցէագրել՝ Въ фабрику А. КИВМАНА, ЛОДЗЬ. Г. Թղթակցութիւնները ռուսերէն։

(շ. հ.) (В.71349) 1203. 2—2

METAMORPHOSA
ВСЕРОССІЙСКАЯ ВЫСТАВКА 1896
ԳԵՂԵՑԻԿ ավ ր ի լ ը
Լ ո ն դ օ ն
ՓԱՏԵՆՏ.

ԿԱՆԱՆՑ հաւատարիմ բարեկամ

ԿՐԵՄ ԿԱԶԻՄԻ

ՄԵՏԱՄՈՐՖՕԶԱ

Ծախված է մօտ ԵՐԿՈՒ միլիօն բանկա

ԱՐՄԱՏԱԿԱՆԱՊԷՍ ոչնչացնում է

ՊԷՊԷՆՆԵՐԸ, ԲՇՏԻԿՆԵՐԸ, ԲԾԵՐԸ, ԽՈՐՇՈՄՆԵՐԸ և ԵՐԵՍԻ ԱՅԼ ԴԷՖԷԿՏՆԵՐԸ։

Հաստատ. Ամսոր և Մանուֆակտ. Դէպարտ. № 4683 գրութեամբ։

(1,11,21, ն. 1,11) (П.130191) 1004. 5—5

Լոյս տեսաւ և վաճառվում է

ՓԱՐՈՍ

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 1910 ԹՒԱԿԱՆԻ

Հարուստ ու ճոխ բովանդակութեամբ։ Պարունակում է իր մէջ մի շարք յայտնի գրական գործիչների յօդուածները, գրած յատկապէս օրացոյցի համար։ Ունի հաւելուած մէջ դեռ լոյս չը տեսած արժէքաւոր յաւելուած «ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ» վերնագրով, որի մէջ զետեղված են քանն հինգ հայ գրագէտների պատկերները իրանց համառօտ կենսագրական և գրական գոյնը որոշող յօդուածներով։ Վեհ. Կաթողիկոսի և Մինաս Չերազի պատկերներով։

ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

Մասն I. 1) Շարժական և անշարժ տօներ, 2) Կայսերական տօներ, 3) Պասկի արարողութեան Թոյլատրելի օրեր, 4) Օրացոյց 1910 Թւականի, 5) Ժամերի համեմատական ցանկը, 6) Որ օրը խանութները պիտի փակել։

Մասն II. 7) Ջեմստվօ, 8) Օրէնսգրքեր, 9) ա) Զինուորագրական կանոններ, բ) Ինչ արժէ զինուորական ծառայութիւնը, 10) Մեծ պետութիւնների զինուորական բիւջէները, 11) Քաղաքական. Մերձ. Արև. վերածնութիւնը, Վօրքման, 12) Երկրաբանական. Երկիրը կը մեռնի ծարաւից, 13) Հիւսիսային բևեռի բացումը, 14) Աստղագիտութիւն. ա) Տարվայ յարատևութիւնը, բ) Տիեզերք. Տարբական հասկացողութիւններ աստղագիտութիւնից, գ) Մոլորակների համեմատական աղիւսակ, 15) Գիտական երազահան. ա) Երազների վաղեմի բացատրութիւնը, բ) Երազները կեանքի արտացոլումներ են, գ) Երազի հոգեբանութիւնը, դ) Երազները և մեր հիւանդութիւնները, ե) Երազները և նրանց նշանակութիւնը, 16) Առողջապահական. ա) Մենք շատ ենք ուտում, բ) Սննդի նորմալ բաժինը 24 ժամվայ համար, գ) Մարսողութեան ցանկը, դ) Մածուն և կէֆիր, ե) Առողջ մարդու ննջարանը, զ) Հագուստը, 17) Գիւղատնտեսական. Երկրագործական գործիքների և մեքենաների մասին. Ա. Աթանասեան, 18) Գիտական. Ջուրը. Յ. Ակունեան։ 19) Լեզուագիտական. ա) Էսպէրանտօ կամ միջազգային լեզու, բ) Գլխաւոր լեզուների տիրապետութիւնը, գ) Բարքեր. մեռելների այրումը, 20) Ֆէլիէտօն. Կապը կտրած կինը. Նար-Դոսի, 21) Դպրոցական. ա) Ուսումը ապագայում. Ղ. Աղայեան, բ) Ազատ մանկան տունը. Կ. Վէնցելի, 22) Կենսագրական. ա) Մատթէոս II, Կաթողիկոս Ամենայն Հայոց, բ) Մինաս Չերազ, 23) Անտեսա-Օրդինաբերական. ա) Ընդհանուր ակնարկ, բ) Առևտրական և ֆինանսական հաստատութիւններ, գ) Գիւղական բանկեր. Ս. Ղալաչեան, դ) Հարկեր և տուրքեր, ե) Պարապմունքի հարկեր, զ) Նոտարական ծախսեր, է) Մուրհակի մասին, ը) Պարտաթուղթ, թ) Պահպանութեան թուղթ, ժ) Տուգանքի թուղթ, ժա) Կանխավճարի մասին, ժբ) Նուէթ, 24) Պօստ. (Կանոնագր. Նորագոյն հրատարակ.։ Այս տարի վերցված է միայն ներքին յարաբերութիւնը լիակատար (45 երես) մանրամասն սակագներով և ցուցակներով)։ 25) Անեկդօտ, 26) Զուարճալիք. ա) Զուարճալի խնդիրներ, բ) Ինչպէս գանել մէկի տարիքը, գ) Տանն երկու անաչող փորձ (սալօնի խաղեր), 27) Ծովը. Վ. Փափազեանի, 28) Ստատիստիկա, 29) Արհեստակցական։

Յաւելուած։ ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ։ Գեղեցիկ թղթի վրա, 64 երես, համառօտ կենսագրական բնորոշ յօդուածներով։

Օրաց. մէջ զետեղված է մի հետաքրքրաշարժ խնդիր, որին լուծողը ստանում է պրեմիա։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Օտար քաղաքացիներին 100 օրինակ պահանջելու դէպքում 20% զեղչ և պօստի ծախսը մեզ վրա։ Դիմել՝ Типографія «Эпоха» В. Вартанянцу.

(ե. հ. կ.) 1137. 8—7

1910 ԹՒԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ"

պատկերազարդ շաբաթաթերթի (Բ տարի)

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը. Երկրագործութիւն։ Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն։ Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն։ Այգեգործութիւն և գինեգործութիւն։ Ցտուկ բոյսերի մշակութիւն։ Մեղուաբուծութիւն և շերամապահութիւն։ Բանջարաբուծութիւն։ Թռչնապահութիւն։ Կօօպերացիա և սպառողական ընկերութիւններ։ Գիւղատնտեսական նորութիւններ։ Գիւղատնտեսական կեանք։ Գրախօսութիւն։ Թղթակցութիւններ։ Տնայնագործութիւն և տնարարութիւն։ Հարց և պատասխաններ։ Պօստ-արկղ և յայտարարութիւններ։

Առաջիկայ 1910 Թւին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև Թիւրքահայ գիւղատնտեսներ։

«Գիւղատնտեսը» 1910 Թւի իր տարեկան բաժանորդներին Թերթի համարներից դուրս տալու է որպէս նուէր՝

ՀԱՑԱԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԽՈՏԱԲՈՅՍԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ

Բաժնեգինը։

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին	3 րուբլի	Տարին	4 րուբլի (12 ֆրանկ)
Կէս տարին	2 րուբլի	Կէս տարին	2 ր. 50 կ. (7 ֆրանկ)

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ". Արտասահմանից՝ Tiflis (Russie) Rédaction «Guchatntess».

(կ. հ.) 1179. 24—4

—○ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ ՊԱՀԵՍՏ ○—

Եղբ. ԵԱՐՂՈՒԼԵԱՆՑՆԵՐԻ

Թիֆլիս, Միջին փողոց, № 65.

Յայտնում ենք ի գիտութիւն յարգելի վաճառականների և հասարակութեան, որ մեր պահեստում ստացված են մեծ քանակութեամբ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ (галоши) և ԿՐՆԿԻ ՌԷՏԻՆՆԵՐ, զանազան տեսակ ՇԷՎՐՕՆԵՐ, ԲՈՔՍԵՐ (խրօմ) ու ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ—Ռուսաստանի և արտասահմանի արդիւնաբերութիւն, նոյնպէս և կօշկակարների գործիքներ ու կօշկադեղեր յայտնի ֆիրմաների։ Ինչպէս կրկնակօշիկները, նոյնպէս և բոլոր ապրանքները ծախում ենք—մեծաքանակ (оптомъ) գնողներին գործարանային գներով, իսկ հատավաճառը (розничн. продажа) ամենաձեռնտու գներով։ Ունենք բաժանմունք ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, որտեղից նոյնպէս կարելի է ստանալ կաշուեղէն և գալանտերէյնի ապրանքներ ձեռնտու գներով։ Վարշավայի բաժ. հասցէն՝ Варшава, Лешно № 8, М. Н. Яргулову.

(կ. հ.) 938 30—18

ВЪЧНАЯ СТОЙКОСТЬ

ԱՐԾԱԹԷ ԺԱՄԱՑՈՅՑ

Միայն 4 ր. 95 կ., 2 հատը՝ 9 ր. 50 կ.

Զվէյցարական մի ֆաբրիկայի լիկվիդացիայի ժամանակ գնելով մեծ քանակութեամբ արծաթէ ժամացոյցներ, մենք հնարաւորութիւն ունենք միւս ֆիրմաներից կէս գնով էժան վաճ.։ Ինչո՞ւ փողերը կորցնել սև ժամաց. համար, քանի որ 4 ր. 95 կ. դուք կարող էք մեզ մօտ ձեռք բերել 84 յարգի արծաթէ ժամաց., որը, նոյնիսկ 10 տարի անընդհատ յետոյ, ունի իր արժէքը։ Արծաթը ընդմիշտ փող է։ Ուղարկում եմ գեղեցիկ ժամաց., շատ տափակ, նորաձև, ընթացքը քարերով, փոնտայի մեռաղէ ցիֆերբլատով, լարումը կոթից՝ 40 ժամը մի անգամ, «Րէմօնտուար»։ Փականները միանգամայն շքեղ գրավիւրներով։ Ուղղված մինչև րոպէները, 6 տարվայ երաշխաւորութեամբ։ Վճարվիր վճ. և առանց կանխավճարի։ Մինչև 4 հատի ճանապարհածախքը 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Մօդային շղթաներ արծաթից, 84 յարգի, էլեգանտ շինուածք, հատը 2 ր. 50 կ., 3 ր. 50 կ., 5 ր.։

Հասցէն՝ Т-во „ПАТЕНТЪ", Варшава, Св. Креста 48.

[illegible]

(В. 63718) 1020. 11—7

1897 Թ.

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА

ФАБРИЧ. КЛЕЙМО
Р Ф З
Т Р
ПРОВОДНИКЪ
РИГА
Т

1888

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

~ՌԻԳԱՅՈՒՄ~

Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սօլօլակսկայա փող., № 4.

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ

ՌԵԶԻՆԱՊԱՏ ԱՆԹԱՓԱՆՑԻԿ ՎԵՐՆԱԶԳԵՍՏՆԵՐ

Արտասահմանեան նոր ձևի, պատրաստված անգլիական ամենալաւ կտորներից սկսած մինչև ամենաէժան կտորները

ՌԵԶԻՆԱՊԱՏ ՊԼԱՇՉՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ պարոնայք օֆիցէրների համար.

ՌԵԶԻՆԱՊԱՏ ԿՏՈՐԵՂԷՆՆԵՐ զանազան կարիքների համար.

ՌԷԶԻՆԻ ՍՊՈՒՆԳՆԵՐ.

ՍԱՆՐԵՐ եղջերեայ ըէզինից

№ 4 1037. 0—3